

Եւ որովհետեւ ի նպաստ հոգւոց՝ մատաղէն զատ ուրիշ տեսակ հացեր ալ կը տրուէին, ինչպէս պիտի տեսնենք, ասոնք ոչ եւս վանքերու մէջ, այլ մերթ «ի գերեզմանին» մեռելոյն կ'ուտուէին՝ նման հեթանոսականին, եւ մերթ «ի տունս», ինչպէս կը յիշատակէ Տաթեւացին (աստ, 364):

4. — Կոչնականք: — Շնորհալուոյն, Որբելեանի եւ այլոց վկայութեանց համեմատ (աստ, 354, '55) այս մատաղին մասնակցողներն են չքաւորք ու թշուառք: Ասոնց մէջ եւս, ինչպէս պարզ ազապի պահուն (աստ, 322), չկայ սեռի խտրութիւն. Գազկայ հոգեհացին ներկայ կը գրտնենք «զղասս աղքատաց, որբոց եւ այրեաց, տնանկաց եւ տառապելոց բիւրաւոր ամբոխից առ նա կուտելոց» (Արժ. 323). այդպէս նաեւ «այրեաց»:

Բայց հոս ալ կու գար բազմիւ բարեկեցիկ դասը, յափշտակելով աղքատաց առաջնութեան իրաւունքը, ինչպէս իւր սովորութիւնն էր (աստ, 321-2): Որով Շնորհալին կը հարկադրի հրամայել՝ որ ճաշելէ յառաջ քահանայից բաժինը տան նախ. եւ մնացորդով յառաջ քաղցածներն ու կարօտները կերակրեն, « եւ ապա թէ յաւելու՝ զսիրելիսն եւ զբարեկամս »